կան տերմինները։ Այդ երևույթը բացատրվում էր նրանով, որ արդեն Աքեմենյան տիրապետության դարաշրջանում և մանավանդ Արշակունյան արքայական տան կառավարության ժամանակներում զրադաշտական կրոնն իր ազդեցությամբ գերակշռող է եղել և կանխորոշել է տիրող դասակարգի և մասամբ լայն ժողովրդական զանգվածների մտածողության ուղղությունը։ Սակայն հայկական հեթանոսական կրոնն այնչափ էական շեղումներ է պարունակում զրադաշտականից, որ նրա ձևավորման սկզբնավորության և զարգացման հաջորդ ընթացքի մեջ որոնել է տալիս մի այլ, պարսկական հողի վրա մշակված աշխարհայացքից տարբեր աղբյուր, որը շատ ավելի վճռական դեր է խաղացել հայ հեթանոսական կրոնի ձևավորման մեջ։ Այսպես՝ այդ շեղումների մեջ նախ և առաջ աչքի է ընկնում այն հանգամանքը, որ հայկական հեթանոսական կրոնի մեջ բացակայում է զրադաշտական մտածողության ամենաէական առանձնահատկությունը՝ ստեղծագործող և ավերիչ ուժերի, լույսի և խավարի, պտղաբերության և չորության, սուրբի և պիղծի հակադրությունը, և Արամազդ-Օրմուզդին (Անուրամազդային) չի հակադրվում Անրիմանը-Անդրոմանիան։ Գրեթե բացակայում է դուալիզմը՝ կրկնաստվածությունը, որը շատ չնչին չափերով է նշմարվում ժողովրդական սովորությունների և նամանավանդ տոների հետ զուգորդված մագիկ[1] ծեսերի մեջ։ Հայկականում ուժեղ է շեշտված աստվածությունների ազգակցությունն և արյունակցական մերձավորությունը, մի բան, որ գրեթե չի դրսևորված պարսկական դիցաբանության մեջ։ Հայկական մտածողության համար աստվածները կազմում էին մեկ ընտանիք։ Այդտեղ մեկը ամուսին էր, մյուսը կին, մեկը հայր կամ մայր, մյուսը զավակ, մեկը քույր, մյուսը եղբայր։ Հավատալիքների մեջ այսպիսով անդրադարձել է այն ազգակցական արյունակցական կապերի ղորությունը, որոնք այնքան բնորոշ էին և մինչև վերջին ժամանակներս պահպանում էին իրենց ռեալ նշանակությունը հայկական հասարակական կյանքի մեջ։ Զրադաշտական մտածելակերպից շեղումները հայկականի մեջ այնքան խորն էին և բազմակողմանի, որ նրանց վերլուծությունը բերում է ինձ այն եզրակացությանը, որ հայկական հեթանոսական աշխարհայացքի մեջ երևան է գալիս հիմնական մերձավոր առնչությունը ոչ թե պարսկական զրադաշտական, այլ փոքրասիական ըմբռնումների հետ, որտեղ սիստեմի է վերածվել ոչ թե արարիչ և կործանիչ ուժերի մշտական մրցումն ու հակադրությունը, այլ կյանքի և մահվան կրկնվող հաջորդականությունը, որտեղ կենդանություն տվող և ինքն էլ կենդանի աստվածությունը մեռնում է և իր մահով սկիզբ է տալիս նոր կյանքին։ Այդ մեռնող և հարություն առնող ուժի պաշտամունքը լայն տարածված է եղել հայկականին կից արևմտյան միջերկրածովյան երկրներում զանազան աստվածությունների պատկերավորումներով ձևավորված։ Այսպիսի աստվածություններ էին հյուսիսային Միջագետքում՝ Թամուզը, Ասորիքում և Փյունիկիայում՝ Ադոնիսը, Փռյուգիայում՝ Ատտիսը, Եգիպտոսում՝ Օզիրիսը։ Դա բուսական աշխարհի ամեն տարի մեռնելու և վերստին վերակենդանանալու օրինաչափությունն է։ Առանձնապես գրավելով ժողովրդի ուշադրությունը, նա դարձել էր նրա աշխարհամեկնման հիմնական ազդակն այն երկրներում, որտեղ տնտեսությունն ամենանախնական ժամանակներից ուժգին կերպով հիմնված էր եղել առավելապես պտղատու ծառերի բուծման և առհասարակ բուսական աշխարհի աշնանային մահվան և գարնանային դար-

[1] Մոգական։